

## **Առողջապահության համաշխարհային կազմակերպություն**

21-ը ապրիլի, 2020 թ.

Մարդու իրավունքների պաշտպանության առանցքային նշանակությունը ԿՌՎԻԴ-19-ին հակազդելու շրջանակում

### **Ներածություն**

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գլխավոր տնօրենը ԿՌՎԻԴ-19-ի մասին խոսքում վերջերս ընդգծեց, որ *«բոլոր պետությունները պետք է նրբորեն հավասարակշռեն առողջության պաշտպանությունը, տնտեսական և սոցիալական գործընթացների նվազագույնս խաթարումը և մարդու իրավունքների հարգումը»*:<sup>1</sup> Մարդու իրավունքների համակարգը կարևորագույն կառույց է, որը կարող է բարձրացնել համավարակի դեմ պայքարի գլոբալ ջանքերի արդյունավետությունը:

ԿՌՎԻԴ-19-ի ներկայիս բռնկումը նկարագրվել է որպես համավարակ (պանդեմիա):<sup>2</sup> ԿՌՎԻԴ-19-ին հակազդելու գլոբալ և ներպետական աշխատանքներում յուրօրինակ և արագորեն փոփոխվող մարտահրավերներ են ծագել ողջ աշխարհում մարդկանց առողջությունը և մարդու իրավունքները պաշտպանելու և պահպանելու տեսանկյունից: Տարբեր պետություններում ԿՌՎԻԴ-19-ի դեմ պայքարի ուղիները գտնելուց զատ, մարդու իրավունքների պաշտպանությունը և երաշխիքները մեր միասնական արձագանքի մաս դարձնելը ոչ միայն բարոյական հրամայական է, այլ նաև՝ հանրային առողջության խնդիրները բարեհաջող լուծելու նախապայման:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության 1948 թվականի Սահմանադրության<sup>3</sup> անկյունաքարը «առողջության հնարավորինս բարձր չափանիշի ապահովումն է»: Առողջությունը որպես մարդու իրավունք դիտարկելու մեր հանձնառությունը պետք է շարունակի փարոսի դեր կատարել հանրային առողջության այս և այլ արտակարգ իրավիճակներին արձագանքող պետությունների համար:

### **Խարանդ և խտրականությունը**

ԿՌՎԻԴ-19-ը արտակարգ իրավիճակ է հանրային առողջության բնագավառում: Պատմությունը ցույց է տվել, որ հանրային առողջության արտակարգ իրավիճակներն

հաճախ խարանի և խտրականության են հանգեցնում ազդակիր որոշ համայնքների և անհատների նկատմամբ:<sup>4</sup>

ԿՈՎԻԴ-19-ի համատեքստում դա արդեն իսկ դրսևորվել է հիվանդությունն ասոցացվել է բնակչության կոնկրետ խմբի կամ որոշակի ազգության հետ:

Խարանը և խտրականությունն ուղղված են եղել նաև ԿՈՎԻԴ-19-ով ախտորոշված անձանց դեմ, ասիական ծագում ունեցող անձանց դեմ կամ ազդակիր պետություններ ճանապարհորդած անձանց դեմ: Թիրախավորվել են անգամ արտակարգ իրավիճակին արձագանքողները և առողջապահության ոլորտում աշխատող մասնագետները: Վաղույց հայտնի փաստ է, որ խարանը և խտրականությունը բացասաբար են ազդում առողջության հետ կապված վարքագծի վրա և բազմաբնույթ հետևանքներ են առաջացնում խարանված խմբերի և նրանց հետ կապված համայնքների ֆիզիկական և հոգեկան առողջության համար:<sup>5</sup>

Մարդու իրավունքների պաշտպանությունը կարող է նպաստել հանրային առողջության այդ մարտահրավերների հաղթահարմանը՝ պահանջելով, մասնավորապես, նախաձեռնողական բնույթի միջոցառումներ իրագործել, օրինակ՝ ապահովել ճշգրիտ տեղեկությունների տրամադրումը կամ խարանող և խտրական վարքագծի և գործելակերպի դրսևորումների բացահայտումը և բացառումը:<sup>6</sup>

### **Գենդերային հավասարությունը և կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը**

Գենդերային և հասարակական անհավասարության առկա դրսևորումները ԿՈՎԻԴ-19-ի պատճառով խորանում են՝ կանանց և աղջիկների վրա ազդելով այլ կերպ, քան՝ տղամարդկանց և տղաների: Կանանց և աղջիկների վտանգվածությունն հավանաբար կրում է նաև հասարակական նորմերի և ակնկալիքների ազդեցությունը, որոնց համաձայն կանայք և աղջիկները պետք է խնամողի և խնամատարի դերում լինեն՝ թե՛ ընտանիքներում հիվանդ անձանց մասին հոգ տանելու իմաստով, թե՛ առողջապահական համակարգում աշխատելու իմաստով (բուժաշխատողների 70%-ն իգական սեռի ներկայացուցիչներ են):<sup>7</sup> Ավելին, կանանց և աղջիկների համար առողջության կարևորագույն ծառայությունների, մասնավորապես՝ սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված ծառայությունների հասանելիությունն հավանաբար ավելի շատ կսահմանափակվի՝ պայմանավորված տեղաշարժի ազատության սահմանափակումների խստացմամբ և տնային տնտեսությունների առջև ծառայող տնտեսական մարտահրավերներով: Այդ սահմանափակումները նրանց մարդու իրավունքների խախտումներ են:<sup>8</sup>

Չեկույցներում ընդգծվել է, որ տանը մնալու պահանջների պատճառով ընտանեկան բռնության կամ մերձավոր զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու ռիսկն ավելանում է այն կանանց պարագայում, ովքեր մինչև համավարակն էլ գտնվում էին բռնի հարաբերությունների մեջ կամ նման հարաբերություններ ունենալու ռիսկային խմբում: Բռնությունը կանանց և աղջիկների նկատմամբ մարդու իրավունքների աղաղակող խախտում է: Կառավարությունները պետք է ճանաչեն կանանց և աղջիկների նկատմամբ

հնարավոր բռնության ավելի բարձր ռիսկայնությունն հանրային առողջության տեսանկյունից: Առողջապահական ոլորտը, չնայած գերլարված պայմաններում աշխատելուն, կարող է որոշ քայլեր ձեռնարկել բռնության հետևանքով պատճառվող վնասը մեղմելու ուղղությամբ՝ ներառյալ հոգեբանական/առաջնահերթ աջակցության ցուցաբերումը և աջակցման այլ ծառայությունների հասանելիության ապահովումը:<sup>9</sup>

### **Աջակցությունը բնակչության խոցելի խմբերին**

ԿՈՎԻԴ-19-ի վտանգը և փորձառությունը տարբեր խմբերի պարագայում տարբեր կերպ են դրսևորվում: Այս պահի դրությամբ գործող ուղենիշների համաձայն՝ ԿՈՎԻԴ-19-ով պայմանավորված առողջական ռիսկը տարեցների և ուղեկցող այլ հիվանդություններ ունեցող անձանց պարագայում ավելի բարձր է համարվում, քան ընդհանուր բնակչության պարագայում:<sup>10</sup> Այնուհանդերձ, անգամ այդ խոցելի խմբերի պարագայում կան դժվարություններ, որոնք ցանկալի կլինեն դիտարկել մարդու իրավունքների «ոսպնյակով»: Ցանկացած տարիքի անձինք, սակայն, կարող են ավելի խոցելի լինել ԿՈՎԻԴ-19-ի նկատմամբ՝ պայմանավորված իրենց կենցաղային պայմաններով, ֆինանսական անկայությամբ և վարակման ռիսկը սահմանափակող կոնկրետ երաշխիքների բացակայությամբ, ինչպիսիք են օրինակ հաշմանդամություն ունեցող անձինք, անօթևան անձինք, փախստականները, միգրանտները և ազատությունից զրկված անձինք:<sup>11</sup> ԿՈՎԻԴ-19-ն առողջությունը պայմանավորող սոցիալական գործոններից բխող՝ հիվանդացության յուրահատուկ միջավայր է բացահայտել, որը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի:<sup>12</sup> Նշված խմբերն աշխարհում ամենաշատը խարանված և ամենաշատը մարգինալացված խմբերից են: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում նշվում է. «Բոլոր մարդ արարածները ծնվում են ազատ և հավասար՝ արժանապատվությամբ և իրավունքներով»,<sup>13</sup> և ԿՈՎԻԴ-19-ին հակազդելու շրջանակում լրացուցիչ ուշադրության կարիք ունեն հենց ամենախոցելի մարդկանց իրավունքները և արժանապատվությունը:

Նշված խմբերի կարիքներին և խոցելիությանն առանձնահատուկ ուշադրություն չդարձնելու դեպքում ավելանում է նրանց վարակման ռիսկը և սասանվում է ԿՈՎԻԴ-19-ի դեմ պայքարի ընդհանուր արդյունավետությունը: Մարդու իրավունքների երաշխիքները և պաշտպանությունը ենթադրում են ԿՈՎԻԴ-19-ի դեմ պայքարի ազգային ծրագրերի շրջանակում հատուկ միջոցառումների իրագործում՝ ապահովելու համար մարդկանց պաշտպանությունը խտրականությունից և երաշխավորելու համար տեղեկատվության, սոցիալական ծառայությունների, բուժօգնության, սոցիալական մեկուսացման և կրթության հնարավորությունների հասանելիությունը խոցելի խմբերի համար:<sup>14</sup>

### **Կարանտինը և սահմանափակող միջոցառումները**

Բազմաթիվ պետություններ հանրային առողջության և սոցիալական բնագավառի մեծածավալ միջոցառումներ են իրագործել՝ փորձելով նվազեցնել վարակի տարածումը և ԿՈՎԻԴ-19-ի ազդեցությունը, ներառյալ կարանտինը և անհատների տեղաշարժի

ազատության սահմանափակումները:<sup>15</sup> ԱՅԿ-ն ընդգծում է, որ ցանկացած նման միջոցառում պետք է իրագործել միմիայն հանրային առողջության և սոցիալական բնագավառի միջոցառումների համապարփակ փաթեթի շրջանակում,<sup>16</sup> և որ դրանք պետք է Առողջության միջազգային կանոնակարգերի (2005 թ.) 3-րդ հոդվածի համաձայն լիովին հարգեն անձանց արժանապատվությունը, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:<sup>17</sup> Այդ միջոցառումների՝ մարդու իրավունքների հետ կապված նկատառումները մանրամասնեցված են թե՛ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի թիվ 14 (2000) ընդհանուր մեկնաբանության մեջ, թե՛ Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (ԶԶԻՄԴ, 1976 թ.), ինչպես նաև լրամշակվել են՝ ի դեմս Սիրակուզայի սկզբունքների (1984 թ.), որոնց համաձայն ցանկացած նման սահմանափակող միջոցառում պետք է լինի օրենքին համապատասխան, հետապնդի իրավաչափ նպատակ, լինի համաչափ և չլինի կամայական կամ խտրական:<sup>18</sup>

Ավելին, մարդու իրավունքների պաշտպանության շրջանակում անհրաժեշտ է, որպեսզի պետությունները կարողանան հիմնավորել, որ ցանկացած նման սահմանափակող միջոցառում անհրաժեշտ է վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու համար՝ որպես վերջնականապես ունենալով անհատների առողջության, իրավունքների և ազատությունների պահպանությունը:<sup>19</sup> Եթե սահմանափակումը մտցնելու սկզբնական պատճառներն այլևս կիրառելի չեն, ապա սահմանափակումը պետք է անհապաղ վերացնել: Բացի դրանից, վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզմներ պետք է լինեն, որոնք ազդակիր անհատներին թույլ կտան վիճարկել այդ սահմանափակումների պատշաճությունը:<sup>20</sup> Համապատասխան երաշխիքները չպահպանելը ոչ միայն առաջացնում է մարդու իրավունքների տարաբնույթ խախտումների ռիսկ ամենախոցելի մարդկանց շրջանում, այլ նաև՝ ի վերջո խաթարում է նաև հանրային առողջության գլոբալ նպատակները:<sup>21</sup>

## **Պարագաների և միջոցների սակավությունը**

Անկախ եկամուտների մակարդակից՝ յուրաքանչյուր երկրի առջև ծառայած կարևորագույն մարտահրավերներից է ԿՈՎԻԴ-19-ի համատեքստում անհրաժեշտ պարագաների, ապրանքների և տեխնիկական միջոցների սակավությունը: Թեստերի, պարագաների, անհատական պաշտպանիչ միջոցների սակավության դեպքում պետական պաշտոնատար անձինք և բուժաշխատողները ստիպված են լինում որոշումներ կայացնել սուղ ռեսուրսները և տեխնիկական միջոցները դրանց կարիքն ունեցող բոլոր անձանց միջև բաշխելու լավագույն տարբերակների վերաբերյալ:<sup>22</sup> Դրանք Էթիկայի բարդագույն խնդիրներ են ստեղծում, որոնք էլ ավելի են բարդանում արտակարգ իրավիճակներում: Պարագաների և տեխնիկական միջոցների սակավությունը ոչ միայն սասանում է վարակի կանխարգելման և վերահսկման միջոցառումները, այլ նաև ուղղակիորեն ազդում է բուժաշխատողների վրա, ովքեր անհատական պաշտպանիչ միջոցների անբավարարության դեպքում ամենաշատն են վտանգվում և կրում վարակման ռիսկը: Առաջնագծում պայքարող մեր բուժաշխատողների պաշտպանությունը կենսական կարևորության խնդիր է, և

անհատական պաշտպանիչ միջոցները՝ ներառյալ բժշկական դիմակները, ռեսպիրատորները, ձեռնոցները, արտահագուստը և աչքերը պաշտպանող միջոցները, պետք է առաջնահերթ կարգով հատկացվեն առողջապահության ոլորտում աշխատող անձանց և ԿՈՎԻԴ-19-ի պացիենտներին խնամող այլ անձանց: Հաշվի առնելով անհատական պաշտպանիչ միջոցների սակավությունը ողջ աշխարհում՝ ԱՀԿ-ն խորհուրդ է տալիս որդեգրել այնպիսի ռազմավարություններ, որոնք նպաստավոր կլինեն անհատական պաշտպանիչ միջոցների օպտիմալ առկայությունը և պատշաճ օգտագործումն ապահովելու տեսանկյունից:<sup>23</sup> Անհատական պաշտպանիչ միջոցների սուր անբավարարության իրավիճակում կառավարությունները, ելնելով մարդու իրավունքներն հարգելու հրամայականից, պարտավոր են հրատապ միջոցներ ձեռնարկել դրանց սակավության կենսական խնդիրը մեղմելու ուղղությամբ և ամեն ինչ անել առաջնագծում պայքարող բուժաշխատողների իրավունքները և բարօրությունը պաշտպանելու ուղղությամբ: Այդ ռազմավարությունները պետք է հիմնվեն գիտական ապացույցների վրա, բուժօգնության անվտանգ ցուցաբերման և առողջապահության անվտանգության, բուժաշխատողների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու և ապահովության կեղծ զգացողությունից խուսափելու սկզբունքների վրա: ԱՀԿ-ն հրապարակել է որոշ ուղեցույցներ այն ռազմավարությունների վերաբերյալ, որոնք խորհուրդ է տրվում որդեգրել նման իրավիճակում:<sup>24</sup>

### **Միջազգային աջակցության և համագործակցության պարտավորությունները**

ԿՈՎԻԴ-19-ն և այս համավարակին հակազդելու հրամայականն արդեն իսկ մեծ վնաս են պատճառել բարձր եկամուտներ ապահովող տնտեսություններից շատերին, և հավանաբար էլ ավելի աղետալի հետևանքներ կունենան ցածր և միջին եկամուտներով պետությունների բնակչության և տնտեսության համար:<sup>25</sup> Ցածր և միջին եկամուտներով պետություններին միջազգային աջակցություն և համագործակցություն անհրաժեշտ կլինի՝ բնակչության վրա ԿՈՎԻԴ-19-ի ազդեցությունը լիարժեքորեն կառավարելու համար: Մարդու իրավունքների միջազգային իրավանորմերի համաձայն՝ մասնակից պետությունների կողմից իրենց սահմաններից դուրս ստանձնած պարտավորությունները, այն է՝ միջազգային աջակցության և համագործակցության պարտավորությունները, հավասարազոր են նրանց ներպետական պարտավորություններին և որևէ առումով ածանցյալ կամ երկրորդական չեն: ԿՈՎԻԴ-19-ը հիշեցնում է ոչ միայն համավարակի, այլ նաև՝ լուծումների համաշխարհային շաղկապվածության մասին:<sup>26</sup> Ցածր և միջին եկամուտներով պետություններին բյուջետային և տեխնիկական ոլորտներում միջազգային աջակցության և համագործակցության ցուցաբերումը կենսական խնդիր է ոչ միայն այս համավարակի դեմ պայքարի՝ առանձին պետությունների տեսանկյունից, այլ նաև՝ պայքարի համաշխարհային ջանքերի արդյունավետության համար:

### **Ապագան**

ԱՀԿ-ն կարևորագույն դերակատարում ունի՝ աջակցելով Անդամ պետություններին հաղթահարել վերոհիշյալ մարտահրավերները և համապարփակ մոտեցում ձևավորել

ԿՈՎԻԴ-19-ին հակազդելու համար: Մարդու իրավունքներն հանրային առողջության բնագավառում մեր կողմից իրագործվող միջոցառումների անքակտելի մաս դարձնելը ոչ միայն բարոյական ուղեցույց կդառնա այս ծանր ժամանակաշրջանում, այլ նաև՝ հիմքեր կձևավորի հանրային առողջության բնագավառում ապագայում հնարավոր ճգնաժամերին մարդկության արձագանքի համար:




## Օգտագործված աղբյուրները

- 1 WHO. Director General, Media Briefing, March 11. Available at <https://www.who.int/dg/speeches/detail/who-director-general-s-opening-remarks-at-the-media-briefing-on-covid-19---11-march-2020> (accessed April 2020)
- 2 WHO. Press briefing 11 March. Available at <https://www.who.int/dg/speeches/detail/who-director-general-s-opening-remarks-at-the-media-briefing-on-covid-19---11-march-2020> (accessed April 2020)
- 3 WHO. Constitution of the World Health Organization. Available at [https://www.who.int/governance/eb/who\\_constitution\\_en.pdf](https://www.who.int/governance/eb/who_constitution_en.pdf) (accessed April 2020)
- 4 CDC. Reducing Stigma. Available at [https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/daily-life-coping/reducing-stigma.html?CDC\\_AArefVal=https%3A%2F%2Fwww.cdc.gov%2Fcoronavirus%2F2019-ncov%2Fsymptoms-testing%2Freducing-stigma.html](https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/daily-life-coping/reducing-stigma.html?CDC_AArefVal=https%3A%2F%2Fwww.cdc.gov%2Fcoronavirus%2F2019-ncov%2Fsymptoms-testing%2Freducing-stigma.html) (accessed April 2020)
- 5 See above CDC. Reducing Stigma.
- 6 WHO/OHCHR. Fact sheet 31: Right to Health. Available at <https://www.ohchr.org/Documents/Publications/Factsheet31.pdf> (accessed April 2020); see also UNAIDS. Agenda for Zero Discrimination in Healthcare. Available at <https://www.unaids.org/en/resources/documents/2017/2017-agenda-zero-discrimination-health-care>
- 7 UNW. Gender Equality Measures in COVID-19 Response. Available at <https://www.unwomen.org/en/news/in-focus/in-focus-gender-equality-in-covid-19-response> (accessed April 2020)
- 8 UNFPA. COVID-19 A gender lens. Available at <https://www.unfpa.org/resources/covid-19-gender-lens>
- 9 WHO. COVID-19 and violence against women. Available at <https://www.who.int/reproductivehealth/publications/vaw-covid-19/en/> (accessed April 2020)
- 10 [https://www.who.int/docs/default-source/coronaviruse/situation-reports/20200311-sitrep-51-covid-19.pdf?sfvrsn=1ba62e57\\_10](https://www.who.int/docs/default-source/coronaviruse/situation-reports/20200311-sitrep-51-covid-19.pdf?sfvrsn=1ba62e57_10)
- 11 See UNHCR, IOM, OHCHR and WHO Joint Statement: The right to health of refugees, migrants and stateless persons must be protected in COVID-19 response. Available at <https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx> (accessed April 2020); See also WHO Europe. Preventing COVID-19 Outbreak in Prisons. Available at <http://www.euro.who.int/en/health-topics/health-determinants/prisons-and-health/news/news/2020/3/preventing-covid-19-outbreak-in-prisons-a-challenging-but-essential-task-for-authorities> (accessed April 2020); See also WHO. Director General Remarks 3 April. Available at <https://www.who.int/dg/speeches/detail/who-director-general-s-opening-remarks-at-the-media-briefing-on-covid-19--3-april-2020> (accessed April 2020)
- 12 WHO. Ethics & COVID-19 – Restrictive Measures and Social Distancing. March 2020.
- 13 UN. Universal Declaration of Human Rights. 1948. Available at <https://www.un.org/en/universal-declaration-human-rights/> (accessed April 2020)
- 14 UNCESCR. General Comment 14: The Right to Health. 2000. Available at [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E/C.12/2000/4&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E/C.12/2000/4&Lang=en) (accessed April 2020)



- 15 WHO. Considerations in adjusting public health and social measures in the context of COVID-19 [https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331773/WHO-2019-nCoV-Adjusting\\_PH\\_measures-2020.1-eng.pdf](https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331773/WHO-2019-nCoV-Adjusting_PH_measures-2020.1-eng.pdf) accessed April 2020)
- 16 WHO. Critical preparedness, readiness and response actions for COVID-19. Available at <https://www.who.int/publications-detail/critical-preparedness-readiness-and-response-actions-for-covid-19> (accessed April 2020)
- 17 WHO. Considerations for quarantine of individuals in the context of containment for coronavirus disease (COVID-19): Interim guidance. March 2020. Available at <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/technical-guidance/infection-prevention-and-control> (accessed April 2020)
- 18 Siracusa Principles on the Limitation and Derogation Provisions in the International Covenant on Civil and Political Rights, U.N. Doc E/CN.4/1985/4, Annex (1985). Available at <http://www1.umn.edu/humanrts/instreet/siracusaprinciples.html> (accessed April 2020)
- 19 See UNCESCR. General Comment 14: The Right to Health. 2000. Available at [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E/C.12/2000/4&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E/C.12/2000/4&Lang=en) (accessed April 2020); WHO. Ethics & COVID-19 – Restrictive Measures and Social Distancing. March 2020.
- 20 WHO. Ethics & COVID-19 – Restrictive Measures and Social Distancing. March 2020.
- 21 WHO. 25 Q&A on Health and Human Rights. Available at <https://www.who.int/hhr/information/25%20Questions%20and%20Answers%20on%20Health%20and%20Human%20Rights.pdf> (accessed April 2020)
- 22 WHO. Shortage of personal protective equipment endangering health workers worldwide. April 3. Available at <https://www.who.int/news-room/detail/03-03-2020-shortage-of-personal-protective-equipment-endangering-health-workers-worldwide> (accessed April 2020); WHO. Rational use of personal protective equipment for coronavirus disease (COVID-19) and considerations during severe shortages. Available at [https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331695/WHO-2019-nCov-IPC\\_PPE\\_use-2020.3-eng.pdf](https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331695/WHO-2019-nCov-IPC_PPE_use-2020.3-eng.pdf) (accessed April 2020); WHO. Rolling updates on coronavirus (COVID-19). Available at <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/events-as-they-happen> (accessed April 2020)
- 23 WHO. Rational use of personal protective equipment for coronavirus disease (COVID-19) and considerations during severe shortages: interim guidance. April 2020. Available at <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/technical-guidance/infection-prevention-and-control> (accessed April 2020)
- 24 WHO. Rational use of personal protective equipment for coronavirus disease (COVID-19) and considerations during severe shortages. Available at [https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331695/WHO-2019-nCov-IPC\\_PPE\\_use-2020.3-eng.pdf](https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331695/WHO-2019-nCov-IPC_PPE_use-2020.3-eng.pdf) (accessed April 2020); WHO. Advice on the use of masks in the context of COVID-19. Available at [https://www.who.int/publications-detail/advice-on-the-use-of-masks-in-the-community-during-home-care-and-in-healthcare-settings-in-the-context-of-the-novel-coronavirus-\(2019-ncov\)-outbreak](https://www.who.int/publications-detail/advice-on-the-use-of-masks-in-the-community-during-home-care-and-in-healthcare-settings-in-the-context-of-the-novel-coronavirus-(2019-ncov)-outbreak) (accessed April 2020)
- 25 Kristalina Georgieva and Dr Tedros Adhanom Ghebreyesus. Op-Ed. The Telegraph. Available at <https://www.imf.org/en/News/Articles/2020/04/03/vs-some-say-there-is-a-trade-off-save-lives-or-save-jobs-this-is-a-false-dilemma>
- 26 UN Special Rapporteur on Right to health. Report to UN Human Rights Council. 2007. Available at <https://www.refworld.org/docid/47da904c2.html>





© World Health Organization 2020. Some rights reserved. This work is available under the [CC BY-NC-SA 3.0 IGO](https://creativecommons.org/licenses/by-nc-sa/3.0/) licence. More information on work to address human rights at: <https://www.who.int/en/news-room/fact-sheets/detail/human-rights-and-health>

WHO reference number: WHO/2019-nCoV/SRH/Rights/2020.1